ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 06.05.2009թ. N 417-Ա/Ք հրամանի հաստատվեց չափորոշիչներ մշակող 100 փորձագետների աշխատանքային խմբերի կազմերը:

2009 թ.-ի մայիսի 25-ից հունիսի 2-ը ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ մշակողների վերապատրաստման 36-ժամյա դասընթացներ:

Դասընթացի նպատակն էր փորձագետների մոտ զբաղմունքների դասակարգչից օգտվելու, մասնագիտության նկարագիր կազմելու, կարողություններին միտված մոդուլները ձևավորելու, պետական կրթական չափորոշչի նախագծի և ուսումնական պլանների կազմման կարողությունների ձևավորումը:

Վերապատրաստումները ընթանում էին բուռն քննարկումներով, ծագում էին բազմաթիվ հարցեր, տրվում էին պատասխաններ, կազմվում էին մոդուլների նախագծեր:

Արդյունքում փորձագետները կազմեցին պետական կրթական չափորոշիչների մոդուլների նախագծեր դրանց մոտ մասնագիտությունների գծով, որոնք նախատեսվում են ներդնել ուսումնական հաստատություններ նոր՝ 2010-2011 ուսումնական տարվանից:

Վերապատրաստումները վարում էին մոդուլային ուսումնական ծրագրեր, և բազմաթիվ այլ կրթական ծրագրերի կազմմանը ակտիվ մասնակցություն ունեցած, ՄԿՈՒ ոլորտի փորձառու մասնագետներ՝ ՄԿՈՒԶԱԿ-ի փոխտնօրեն Աշոտ Սահրադյանը և □Գլոբալ զարգացումներ□ հիմնադրամի տնօրեն Արամ Ավագյանը: